ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *արդյունաբերական քաղաքականություն, համագործակցություն, կոոպերացում, զարգացած երկրներ, ԲՀՌՉԱ, ԵԱՏՄ*

Արդյունաբերական քաղաքականության մշակումը նշանակում է առաջին հերթին՝ տնտեսական գերակայությունների որոշում, որոնք համապատասխանում են տնտեսության պետական կարգավորման, կառավարման հնարավորություններին և տնտեսական պայմաններին: Անցումային տնտեսություն ունեցող երկրները կարիք ունեն ուսումնասիրելու զարգացած երկրների արդյունաբերական քաղաքականության իրացման հաջողված փորձը՝ լավագույն մոդելները յուրացնելու և բացասական հետևանքները նվազագույնի հասցնելու համար:

Սույն հոդվածում դիտարկվում է զարգացած և ԲՀՌՉԱ երկրների արդյունաբերական քաղաքականության իրացման փորձը՝ ԵԱՏՄ երկրների շրջանակներում այն կիրառելու նպատակով:

Արդյունաբերական քաղաքականության մշակումը նշանակում է առաջին հերթին՝ գերակայությունների, փոխազդեցության կարգավորման օբյեկտների, մշտադիտարկման և շտկման գործառնությունների որոշում, որոնք համապատասխանում են տնտեսության պետական կարգավորման, կառավարման հնարավորություններին և տնտեսական պայմաններին: Այս դեպքում արդյունաբերական քաղաքականության գործիքների համակցումը պետք է համապատասխանի տնտեսության իրական հատվածի որոշակի փուլին և չի կարող չփոխվել ճգնաժամի, կայունության, ստագնացիայի, տնտեսական աճի և ակտիվ կառուցվածքային վերափոխման փուլերի հերթափոխությանը զուգընթաց: Դրա համար էլ յուրաքանչյուր պետության դերը և կշիռը շատ առումներով աշխարհում գնահատվում են հիմնովին նոր արդյունաբերական տեխնոլոգիաների մշակմամբ և ներդրմամբ՝ ներկա բացասական իրողություններին պատշաճ պատասխանելու համար[1]:

Ամեն դեպքում անցումային տնտեսություն ունեցող երկրները կարիք ունեն ուսումնասիրելու զարգացած երկրների արդյունաբերական քաղաքականության իրացման հաջողված փորձը՝ լավագույն մոդելները յուրացնելու և բացասական հետևանքները նվազագույնի հասցնելու նպատակով: Սակայն դա պետք է հաշվի առնել յուրաքանչյուր երկրի ժողովրդագրական և հումքային ապահովվածության առանձնահատկությունները:

---

[1] Ա. Արշակյան, Արդյունաբերական քաղաքականության կայացումը և զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, սեղմագիր Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, Եր., 2002:

Այսպես՝ արդյունաբերական արագ զարգացման ամենահաջողված օրինակներից է Ճապոնիայի տնտեսությունը, որն ուներ շատ ավելի ընդգծված արդյունաբերական ուղղվածություն, քան այլ արդյունաբերական երկրներ: Ճապոնիայի տնտեսությունը շատ արագ աճ ապրեց, սակայն հիմնական հարցն այն է, թե արդյո՞ք աճի առանցքը վարվող արդյունաբերական քաղաքականությունն էր: Կարծում ենք, որ գոյություն ունի առնվազն երկու փաստարկ, որոնք թույլ են տալիս Ճապոնիայի հաջողությունները վերագրել միայն արդյունաբերական քաղաքականությանը: Նախ՝ ապացուցված չէ, որ կառավարության ջանքերը երկիրը տանելու արդյունաբերականացման ուղղությամբ, ավելի արագ արդյունք տվեցին, քան եթե դա իրականացվեր ազատ շուկայական տնտեսության պայմաններում: Երկրորդ՝ հնարավոր է, որ Ճապոնիայի արդյունաբերության դինամիկան պայմանավորված չէ համապատասխան քաղաքականությամբ, և Ճապոնիան հաջողության կհասներ ամեն դեպքում, քանի որ այն ուներ աշխարհի ամենաբարձր խնայողությունների մակարդակը, կրթության արդյունավետ համակարգ, կապիտալի ու աշխատուժի արդյունավետ փոխազդեցություն, ավանդույթներ[1]: Այս պայմաններում կարելի է պնդել, որ Ճապոնիայի արդյունաբերականացման քաղաքականությունը երկրի տնտեսական զարգացման մեջ խաղացել է շատ համեստ դեր:

Ամերիկյան արդյունաբերական քաղաքականության առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ը հավատարիմ է մնում ազատ շուկայի գաղափարախոսությանը, որը բացառում է պետական այնպիսի կառավարումը, ինչպիսին առկա է Ճապոնիայում: Այնուամենայնիվ, ամերիկյան կառավարությունը առաջնային դեր խաղաց մի շարք ոլորտների աճի խթանման գործում: Դա առավել ակնառու էր գյուղատնտեսության ոլորտում: Սակայն, եվրոպացի փորձագետները, արդյունաբերական զարգացման՝ սեփական երկրների ավելի ցածր ցուցանիշները բացատրում են ԱՄՆ-ի և Ճապոնայի արդյունաբերական քաղաքականության բարձր արդյունավետությամբ:

Եվրոպական երկրներից հենց Գերմանիայի փորձն է արժանի ուշադրության, քանի որ, տնտեսական քաղաքականության հետ մեկտեղ, այստեղ կարևոր դեր ունի տնտեսական գործընթացների պետական կարգավորումը:

Վերջին տարիներին Գերմանիայի հետաքրքրությունն արդյունավետ արդյունաբերական քաղաքականության իրացման մեջ կապված է նրա հետ, որ Եվրամիության գործընկերները, հատկապես՝ Ֆրանսիան, այն ակտիվորեն օգտագործում է[2]: Դրա միջոցով ԵՄ երկրներն ապահովում են առանձին արդյունաբերական ոլորտների մրցակցային առավելությունները: ԱՄՆ-ը, Չինաստանը և Հնդկաստանը Գերմանիայի հիմնական մրցակիցներն են համաշխարհային շուկայում, որոնք ևս իրականացնում են ակտիվ արդյունաբերական քաղաքականություն՝ ուղղված ազգային արտադրության պաշտպանությանը: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը միայն ուժեղացրեց ազգային արդյունաբերական քաղաքականության հովանավորչական բնույթը: Մյուս կողմից՝ գերմանա-

---

[1] Промышленная политика Японии, http://www.webeconomy.ru/index.php?page=cat&cat=mcat&mcat=155&type=news&top_menu=photo&sb=90&newsid=3547

[2] Черников Г. П., Черникова Д. А., Европа на рубеже XX–XXI веков: учеб. пособие. М.: МГИМО, 2006.

կան արդյունաբերությունը կարիք ունի պետության նպատակաուղղված աջակցության՝ որոշ դանդաղ զարգացող ճյուղերի առաջընթացի համար: Խոսքն առաջին հերթին նորարարությունների և տարածքային առավելությունների արդյունավետ օգտագործման մասին է: Պատահական չէ, որ Գերմանիան սկսել է ավելի մեծ ուշադրություն դարձնել կառուցվածքային ոլորտային քաղաքականության իրացմանը:

Վերջին տարիներին համաշխարհային արդյունաբերության մեջ իրենց ուրույն տեղն ունեն ԲՀՌՉԱ երկրները: Այս երիտասարդ միջտարածաշրջանային կառույցը իր զարգացման վաղ փուլում է, ինչը թույլ է տալիս մշակել ռազմավարության հիմնական առաջնահերթությունները: Դրանք են[1].

- իրական հատվածի զարգացում,
- արդյունաբերական արտադրանքի ծավալների աճ,
- գիտության, տեխնոլոգիայի և նորարարության զարգացում,
- փոքր ու միջին բիզնեսի զարգացում:

Այսպես՝ իրական հատվածում ԲՀՌՉԱ երկրները պլանավորում են կենտրոնանալ գերակա արդյունաբերական կլաստերների զարգացման վրա՝ արդիական տեխնոլոգիաների, նորարարությունների, գիտության և ենթակառուցվածքների զարգացման, տեղեկատվական համակարգերի և կառավարման նոր տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

ԲՀՌՉԱ երկրների զարգացման արդյունաբերական քաղաքականության ազգային ծրագրերն առաջին հերթին ուղղված են փոքր ու միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացմանը: Սա ենթադրում է ֆինանսական և կազմակերպչական աջակցություն ՓՄՁ-ներին՝ արտադրական ծրագրերի իրականացման ժամանակ: Զարգացման ծրագրերը թույլ են տալիս լավագույնս բացահայտել համագործակցության և գործընկերության հեռանկարային ուղղությունները՝ հիմնվելով համաշխարհային շուկայում առաջարկի և պահանջարկի հարաբերակցության վրա:

Միջին ձեռնարկատիրության զարգացումն արդյունաբերական ոլորտում թույլ է տալիս իրացնել պետական զարգացման ծրագրերի առանցքային խնդիրները՝ ներառյալ ներմուծման կրճատումը սեփական արտադրության զարգացման հաշվին և արտահանման ներուժի ձևավորումը՝ ուղղված ազգային եկամտի մեծացմանը և բնակչության բարեկեցության բարձրացմանը:

Բնական ռեսուրսներով հարուստ երկրների տնտեսական դանդաղ զարգացման հիմնական պատճառներից մեկը տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների գերակայությունն է տեղական արտադրությունների նկատմամբ, որի արդյունքում ձևավորվում է փոքր ազգային եկամուտ, որն էլ չի նպաստում պետական և մասնավոր ազգային հատվածների զարգացմանը[2]: Հետճգնաժամային իրավիճակում ԲՀՌՉԱ երկրների արդյունաբերական քաղաքականության անկյունաքարը դարձավ կայուն տնտեսական զարգացման ապահովումը, որը առավելապես արդյունավետ է պետության և մասնավոր հատվա-

---

[1] Кульков И.В., Промышленная политика БРИКС, UNIDO, М., 2015.

[2] Добин Ф., Формирование промышленной политики. Соединенные Штаты, Великобритания и Франция в период становления железнодорожной отрасли, “Высшая школа экономики”, М., 2013.

ծի փոխհարաբերությունների հաստատման և միջազգային համագործակցության խորացման պայմաններում: Տնտեսական հավասարակշռության հաստատումը պետական հատվածից պահանջում է առևտրային, ֆինանսական և արդյունաբերական քաղաքականությունների նոր մոտեցումներ՝ տնտեսական արդի միտումները հաշվի առնելով:

Ինչ վերաբերում է Եվրասիական տարածաշրջանային միավորմանը, ապա ԵԱՏՄ պայմանագրի իրացման կարևորագույն իրադարձություններից է 2015 թ. սեպտեմբերին ընդունված արդյունաբերական համագործակցության փաստաթուղթը[1], որն ունի ռազմավարական բնույթ և ուղղված է երկրների կոոպերացիոն համագործակցության խորացմանը, գործող արտադրությունների ինտելեկտուալ արդիականացմանը և արդյունաբերության նոր ոլորտների ձևավորմանը, ինչպես նաև արտահանման ենթակա մրցունակ ապրանքների արտադրությանը: Այս փաստաթղթով նորարարական տնտեսության ձևավորման հիմք է դրվել՝ ի հաշիվ բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացման, մեծ ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրության:

Համակարգային փաստաթուղթը որոշակիացնում է կողմերի արդյունաբերական համագործակցության նպատակները, ուղղությունները, ինչպես նաև դրանց իրացման գործիքները և մեխանիզմները:

Այսպես՝ ԵԱՏՄ արդյունաբերական քաղաքականության հիմնական խնդիրներն են արտադրության բազմազանեցումը, ներմուծման փոխարինման ներուժ ունեցող ձեռնարկությունների զարգացումը և արտահանման ներուժ ունեցող արտադրությունների խթանումը: Ներմուծման փոխարինման անհրաժեշտությունը բացատրվում է տեղական արտադրության հաշվին ԵԱՏՄ պահանջարկի բավարարմամբ՝ ապրանքների գների վերահսկելիության նպատակով:

Փաստաթուղթը նաև որոշակիացնում է համագործակցության այլ ուղղություններ, որոնցից առավել կարևոր են[2]՝

- մրցունակ արդյունաբերական արտադրանքի նոր տեսակների յուրացում ԵԱՏՄ ներքին շուկայի պահանջարկի բավարարման և արտահանման համար,
- ԵԱՏՄ արդյունաբերության նորարարական զարգացում,
- ներդրումների ներգրավում և արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսական ռեսուրսների հասանելիություն,
- ԵԱՏՄ ընդհանուր շուկայում արդյունաբերական ապրանքների շարժի ճանապարհին արգելքների վերացում:

Հիմնական շեշտը դրված է արդյունաբերական համալիրների նորարարական արդիականացման, համաշխարհային շուկայում պահանջարկված գիտատար արդյունաբերական արտադրանքի նոր կոոպերացիոն շղթաների ձևավորման վրա: Այս նպատակով ստորագրված փաստաթուղթը ենթադրում է միասնական նորարարական ենթակառուցվածքի աստիճանական ձևավորում, որը ներառում է տեխնոլոգիաների փոխանցման Եվրասիական ցանցը, տեխնոլոգիական պլատֆորմի, կլաստերների, ինժինիրինգային

---

[1] Промышленная политика ЕАЭС: от создания к первым результатам. Под ред. С.С. Сидорского, ЕЭК, М., 2015.

[2] Նույն աղբյուրը, էջ 56-60:

կենտրոնների ստեղծումը: Հեռանկարային պլանների մեջ է մտնում նաև ԵԱՏՄ երկրների արդյունաբերության թվային ձևափոխությունը, որը կնպաստի դեպի թվային տնտեսություններ անցմանը: Բացի այդ, արդյունաբերական քաղաքականության հիմնական ուղղություններից է համատեղ ծրագրերի և նախագծերի իրականացումը, արտադրանքի տեղայնացման մակարդակի բարձրացումը, ենթակապալառուական պայմանագրերի զարգացումը, երրորդ երկրների շուկաներ համատեղ մուտքը:

Նախատեսվում է նաև ավելացնել բիզնեսի մոտիվացիան և խրախուսել համատեղ դիլերային և սպասարկման ցանցերի, մեքենաների և տեխնիկական ապրանքների սերտիֆիկացման ու տեխնիկական աջակցության կենտրոնների ստեղծումը հատուկ ինտեգրված վաճառքի ընկերությունների և կոնսորցիումների համար:

Այսպիսով՝ կարծում ենք, որ ԵԱՏՄ երկրների կողմից միասնական արդյունաբերական քաղաքականության իրացումը և գործընկեր երկրների՝ այս ուղղությամբ համագործակցության խորացումը թույլ կտան ընդլայնել նրանց տնտեսական կապերը՝ ինտեգրման գործընթացում ներառելով մեծ թվով փոքր և միջին ձեռնարկություններ, ստեղծելով նոր արտադրական շղթաներ, ապահովելով երրորդ երկրներում ընդհանուր փոխշահավետ մարքեթինգային ռազմավարություն (անհիմն մրցակցության փոխարեն): Արդյունաբերական ռազմավարությունը նաև որոշակիացնում է համագործակցության առաջնահերթ արտադրություններն ու զգայուն ապրանքները, ինչը, կարծում ենք, թույլ կտա ջանքերը կենտրոնացնել համագործակցության առավել կարևոր և արդյունավետ ոլորտներում:

ДИАНА ГАЛОЯН

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ МИРОВОГО ОПЫТА ПРОМЫШЛЕННОЙ ПОЛИТИКИ

Ключевые слова: *промышленная политика, сотрудничество, кооперация, развитые страны, БРИКС, ЕАЭС*

Развитие промышленной политики означает, прежде всего, определение экономических приоритетов, которые соответствуют государственному регулированию экономики, возможностям управления и экономическим условиям. Страны с переходной экономикой должны изучать успешный опыт промышленной политики развитых стран с целью овладения лучшими моделями и минимизации негативных последствий. По этой причине в данной статье рассматривается опыт проведения промышленной политики развитых стран и стран БРИКС с целью внедрения опыта в рамках ЕАЭС.

DIANA GALOYAN

COMPARATIVE ANALYSIS OF WORLD EXPERIENCE OF INDUSTRIAL POLICY

Key words: *industrial policy, interrelation, cooperation, developed countries, BRICS, EAEU*

The development of industrial policy first of all means the definition of economic priorities that correspond to the state regulation of the economy, management opportunities and economic conditions. Emerging countries should study the successful experience of industrial policies of developed countries

with the aim of mastering the best models and minimizing the negative consequences. For this reason, this article examines the experience of carrying out the industrial policy of developed countries and BRICS countries with the aim of introducing this experience within the framework of the EAEU.

ԶՈՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. *Չինաստան, աճի տեմպ, սոցիալիզմ և շուկա, ինովացիոն տնտեսություն, գիտական կենտրոն, արդյունաբերական արդիականացում, հատուկ տնտեսական գոտի, գիտական պարկ, չորս արդիականացումներ*

XX դարի երկրորդ կեսից սկսվեց անցումը սոցիալ-տնտեսական զարգացման ինովացիոն (նորարարական) ուղուն: Դա յուրաքանչյուր երկրի համար ապահովում է որակապես նոր մակարդակ և մրցունակություն: Մի շարք զարգացող երկրներ ձգտում են արդյունավետ գիտական քաղաքականության իրականացման, օտարերկրյա գործնական փորձի փոխառնմամբ՝ ինովացիոն ներուժի հնարավորինս արագ ձևավորման: Չինաստանն ինովացիոն ռազմավարության իրականացման ոլորտում ամենահաջողված երկրներից մեկն է, որտեղ գիտության որակի, տեխնոլոգիաների և շուկայական մեխանիզմների կիրառումը հնարավորություն է տվել արագացնելու գիտահետազոտական մշակումների առևտրայնացումը և դրա շնորհիվ դառնալու զարգացած երկրների գլխավոր մրցակիցը:

Գլոբալ մրցակցության պայմաններում համաշխարհային տնտեսական ասպարեզում առաջատար դիրքեր զբաղեցնելու հավակնություններ ունեցող երկրներից պահանջվում է ինովացիոն զարգացման բարձր մակարդակ: Այն երկիրը, որը փող չի ծախսում սեփական ինովացիաների վրա, «կերակրում» է ուրիշի տնտեսությունը:

Այդ առումով, Չինաստանը չի թաքցնում առաջատար ինովացիոն գերտերություն դառնալու իր հավակնությունները: Վերջին քսան տարիների ընթացքում, ապահովելով տնտեսական աճի բարձր տեմպեր (տարեկան 9-10%), սկսած 2010 թ., Չինաստանին հաջողվել է ՀՆԱ արտադրության ծավալով աշխարհում զբաղեցնել երկրորդ հորիզոնականը՝ միաժամանակ մնալով խոշորագույն արտահանող առաջատար երկիր, հետևում թողնելով ԱՄՆ-ին և Գերմանիային: Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ 2015 թ. Չինաստանն արտադրել է համաշխարհային ՀՆԱ-ի 14.8%-ը: Դա 2.5 անգամ գերազանցում է Ճապոնիայի և 3.2 անգամ՝ Գերմանիայի համապատասխան ցուցանիշը[1]:

[1] http://businessviews.com.ua/ru/economy/id/krupnejshie-ekonomiki-mira-1540/